ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԻ ՄՐՑՈՒՅԹ-ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ՝ ARMLEGAL EXPO 2019-Ի ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

27.03.2019 11:32

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԻ ՄՐՑՈՒՅԹ-ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ՝ ARMLEGAL EXPO 2019-Ի ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Տեղեկացնում ենք, որ 2019թ. ապրիլի 23-ին ժամը 11:00-ից 17:00-ն «Երևան Էքսպո» ցուցահանդեսային կենտրոնում (հասցե՝ ք. Երևան, Հակոբ Հակոբյան փողոց 3) տեղի է ունենալու Հայաստանի փաստաբանական գրասենյակների ARMLEGAL EXPO 2019 ցուցահանդեսը, որի շրջանակներում կազմակերպվելու է նաև

ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ԵՎ ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉՆԵՐԻ՝ ԻՐԱՎԱԿԱՆ ԽՈՐԱԳԻՐ ՈՒՆԵՑՈՂ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԻ ՄՐՑՈՒՅԹ-ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ:

Մրցույթ-ցուցահանդեսի ժամանակ յուրաքանչյուր փաստաբանական գրասենյակ իր ցանկությամբ կգնահատի մեկ լուսանկար և հատուկ մրցանակ կհանձնի լուսանկարի հեղինակին: ՀՀ փաստաբանների պալատը հատուկ մրցանակ է սահմանելու լավագույն երեք լուսանկարների համար:

ՄՐՑՈՒՅԹ-ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ԵՆ

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ ՊԵՏՔ Է՝		ԼՈՒՍԱՆԿԱՐԸ ՉՊԵՏՔ Է՝	
✓	ներկայացված լինի հեղինակի կողմից	✗	երբևէ ներկայացված լինի որևէ ցուցահանդեսում կամ այլ հանրային միջոցառման շրջանակներում
✓	իրավական խորագիր ունենա (լուսանկարը պետք է իրավական իմաստ պարունակի իր պատկերում կամ վերնագրում)	✗	կատարված լինի լուսանկարչական ֆոտոխցիկից բացի այլ տեխնիկայով
✓	արված լինի Հայաստանի անկախության տարիներին (1991-2019թթ.)	✗	լինի լուսանկարված որևէ հրատարակված աղբյուրից (գիրք, ամսագիր, պաստառ և այլն)
✓	տպագրված լինի 30*40 սմ չափով	✗	վերցված (գնված) լինի համացանցային որևէ ռեսուրսից
✓	ներկայացվի տպագրված տարբերակով և էլեկտրոնային եղանակով՝ կրիչով կամ էլ. փոստով՝ press@advocates.am՝ մինչև 2019 թվականի ապրիլի 15-ը, ժամը 18:00		

Խնդրում ենք հաշվի առնել, որ մրցույթ-ցուցահանդեսին մասնակցության հայտ ներկայացնելով լուսանկարի հեղինակը տալիս է իր համաձայնությունը ՀՀ փաստաբանների պալատին՝
- իր պաշտոնական կայքէջում, ինչպես նաև այլ համացանցային և տպագիր հարթակներում հրապարակել լուսանկարը, ինչպես նաև լուսանկարի վրա տեղադրել ARMLEGAL EXPO-ի տարբերանշանը:
- հաղթող ճանաչված լուսանկարները ցուցադրության համար փակցնել ՀՀ փաստաբանների պալատում:

Առաջարկվող նորություններ



26.03.2019ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ԿԱՆՑԿԱՑՆԻ ARMLEGAL EXPO 2019 ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

16.04.2019ARMLEGALEXPO 2019 ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })